

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

ՖԻՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ ՌՈՔԵՐՏԻ

**ՄԱՀՄԱՆԱՍԵՐԶ ԳՈՏՈՒ ԱԶԳԱԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ԱՐՑԱԽԻ ՕՐԻՆԱԿՈՎ)**

ԺԹ.00.03 «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ
հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2021

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

հոգեբանական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր **Նաիրա Ռաֆիկի Հակոբյան**

**Պաշտոնական
ընդդիմախոսներ՝**

հոգեբանական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Սեդրակ Ադատու Սեդրակյան

հոգեբանական գիտությունների թեկնածու,
դոցենտ Իզաբելլա Արտավազդի Ղազարյան

**Առաջատար
կազմակերպություն՝**

ՀՀ պետական կառավարման ակադեմիա


Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2021թ. սեպտեմբերի 29-ին՝ ժամը 12⁰⁰-ին, Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի հոգեբանության 064 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0010, Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 15.07.2021 թ.:

Հոգեբանության 064 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար, հոգեբանական
գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝



Կ.Շ. Վարդանյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Հասարակական կյանքի ներկա պայմաններում, երբ առկա են հարավորտի տնտեսական, սոցիալական հարաբերություններ, աշխարհաքաղաքական տարաբովանդակ իրողություններ, էթնիկական կոնֆլիկտներ, հասարակական բնականոն կյանքն ու գործունեությունը խաթարող հոգեբանական գործոնների ուսումնասիրությունը, բացասական պոտենցիալի մարման ուղիների վերհանումն ու գործարկումը դառնում է օրակարգային:

Հասարակության զարգացման ու փոխակերպումների հոլովությունում կոնֆլիկտածին ու սթրեսածին մթնոլորտի, բացասական հոգեբանական ապրումների տարաբնույթ դրսևորումների երևույթները առավել տեսանելի են դառնում մասնավորապես սահմանամերձ գոտու ազգաբնակչության շրջանում, որտեղ անձից պահանջվում է սոցալ-հոգեբանական հարմարման յուրատիպ մեխանիզմների ձևավորում, առկայություն ու իրարկում, հոգեբանական պաշտպանության մեխանիզմների դրական կոնստրուկտների ակտիվ գործառնություն:

Սահմանամերձ գոտու ազգաբնակչության (Արցախի օրինակով) կենսագործունեության համատեքստում շեշտադրված են դարձել հոգեբանական պաշտպանության մեխանիզմների յուրատիպ դրսևորումները, ինչի բազմաշերտ ու բազմաբովանդակ ուսումնասիրությանն էլ միտված է սույն ատենախոսությունը: Այսօր, առավել քան երբևէ, կապված տարածաշրջանում մոլեզմող հակամարտությունների հետ՝ ազգաբնակչության հոգեկան առողջությունը վտանգող բացասական գործոնների, հուզական լարվածության մարմանն ուղղված հոգեախտորոշիչ ուսումնասիրությունները խիստ հրատապ են և բառացիորեն միտված են տարաբնույթ հոգեբանական բացասական գործոնների նվազեցմանն ու սոցիալական վարքագծում և ընկալումներում ապակառուցողական սթրեսածին դրսևորումների կանխմանը:

Այս տեսանկյունից անձի, իսկ ավելի լայն իմաստով սահմանամերձ գոտու ազգաբնակչության հոգեբանական պաշտպանության մեխանիզմների առանձնահատկությունների ու յուրատիպությունների վերհանումն ու իմաստավորումը, կարծում ենք, արդիական և հրատապ գիտական խնդիր է:

Հիմնախնդրի գիտական մշակվածության աստիճանը: Թեպետ սահմանամերձ գոտու ազգաբնակչության հոգեբանական հիմնախնդիրների վերաբերյալ այսօր արդեն առկա են բազմաթիվ հոգեբանական հետազոտություններ թե՛ հայ (Մ. Մկրտումյան, Վ. Մարգարյան, Լ. Արամյան, Չ. Հովհաննիսյան, Լ. Մարգարյան, Լ. Մկրտումյան և այլն) և թե՛ այլազգի գիտնական-հոգեբանների կողմից (Է. Շթյոյթինգ, Մ Սամարդաշվիլի, Վ. Կազանսկի, Վ. Կոլոսով, Ա. Կրինդաչը, Լ. Վարդումսկի, Ն. Բիստրիցկայա, Լ. Դրոբիժևա, Օ. Այմազանբեռտովա, Վ. Մեդվեդև, Յ. Կորոլենկո և այլք), այնուամենայնիվ դեռ շատ

ու շատ հոգեբանական խնդիրներ կարոտ են լուսաբանման ու նորովի մեկնաբանման:

Չոգեբանական գիտակարգում պաշտպանության մեխանիզմների հայեցակարգը, անձի արժեհամակարգի հիմնախնդիրները այս կամ այն առումով ներկայացված են տարբեր հոգեբանական դպրոցներ և ուղղություններ ներկայացնող հետազոտողների կողմից (Ջ. Ֆրեյդ, Է. Ֆրոմ, Թ. Շիբուտանին, Ա. Մասլոու, Բ. Բերն, Ա. Նալչաջյան, և այլք):

Այդուհանդերձ, հոգեբանության զարգացման ներկա տեսամեթոդական շեշտադրումներից ակնհայտորեն դուրս է մնացել սահմանամերձ գոտու ազգաբնակչության հոգեբանական պաշտպանության թիրախային ուսումնասիրման անհրաժեշտությունը, չկա միասնական ըմբռնում խնդրի սահմանման և ուսումնասիրման տեսամեթոդական մոտեցումների վերաբերյալ, բացակայում է հոգեբանական պաշտպանության մեխանիզմների կենսակայունությանը նպաստող դրական կոնստրուկտների ամրակայմանն ուղղված խնդիրների ձևակերպումը, հստակեցված չէ պաշտպանության մեխանիզմների տեղն ու դերը անձի արժեհամակարգում:

Շեշտագոտության նպատակն է վերլուծության ենթարկել սահմանամերձ գոտու ազգաբնակչության հոգեբանական պաշտպանության մեխանիզմների դրսևորման առանձնահատկությունները, առաջադրել սահմանամերձ գոտու ազգաբնակչության շրջանում կենսակայունության ցուցանիշների բարձրացում և արժեքային համակարգի բաղադրատարրերում դրանց ամրակայումն ապահովող հոգեբանական պաշտպանության մեխանիզմների կումուլյացիայի հայեցակարգ:

Այս նպատակին հասնելու համար անդրադարձել ենք հետևյալ խնդիրներին՝

- վերլուծել հոգեբանական պաշտպանության մեխանիզմների հասկացության շրջանակները հոգեբանական գիտակարգում,
- բնութագրել սահմանամերձ գոտու ազգաբնակչության հոգեբանական պաշտպանության հիմնախնդրի էությունը,
- վերհանել սահմանամերձ գոտու ազգաբնակչության հոգեբանական պաշտպանության դրսևորման առանձնահատկությունները,
- առաջադրել հոգեբանական պաշտպանության կումուլյատիվ մոդելի հայեցակարգը,
- վերհանել հոգեբանական պաշտպանության մեխանիզմների համահարաբերակցությունը կենսակայունության ցուցանիշների հետ,
- վերհանել հոգեբանական պաշտպանության մեխանիզմների ազդեցությունը արժեհամակարգի տարրերի դրսևորումների վրա:

Հետազոտության վարկածը: **Ենթադրվում է**, որ սահմանամերձ գոտու ազգաբնակչության (Արցախի օրինակով) հոգեբանական պաշտպանության մեխանիզմների դոմինանտող կոնստրուկտները մինչպատերազմական շրջանում դրսևորվում են կումուլյացիայի վերընթաց ուղղվածությամբ և արժեհամակարգում ամրակայմամբ, որոնք հետպատերազմական շրջանում նահանջում են, ինչն ուղեկցվում է տագնապայնության մակարդակի էական աճով և կենսակայունության ցուցանիշների նվազմամբ:

Հետազոտության օբյեկտն է հոգեբանական պաշտպանության մեխանիզմների դրսևորումները սահմանամերձ գոտում:

Հետազոտության առարկան է հոգեբանական պաշտպանության մեխանիզմների կոնստրուկտների կումուլյատիվ առանձնահատկությունները սահմանամերձ գոտում:

Հետազոտության տեսամեթոդական հիմք են հանդիսացել Լ. Վիգոտսկու, Բ. Անանի, Ռ. Լազարուսի, Դ. Լեոնտևի, Ա. Լեոնտևի, Ա. Ադլերի, Ս. Բոգոմազի հիմնադրույթները՝ անձի պաշտպանության մեխանիզմների և հոգեբանական կայունության վերաբերյալ, Ֆ. Վասիլյուկի՝ կրիտիկական իրավիճակների հաղթահարման հիմնադրույթը, Ֆ. Բասսինի՝ անձի պաշտպանության մեխանիզմների և ինքնագիտակցության վերաբերյալ մոտեցումները, Ս. Գևորգյանի՝ կոնֆլիկտի էության և հաղթահարման հիմնադրույթը, Ն. Հակոբյանի՝ փոխակերպվող հասարակությունների ու մարզինալացման վերաբերյալ տեսությունը, Լ. Անցիֆերովայի և Ս. Մկրտումյանի՝ արտակարգ իրավիճակների և դժվար կյանքի պայմանների վերլուծությունները, Ռ. Պլուտչիկի, Հ. Կելլերմանի՝ հոգեբանական պաշտպանության մեխանիզմների և կենսակայունության, Մ. Ռոկիչի՝ արժեհամակարգի բաղադրիչների մեթոդաբանական մշակումները:

Աշխատանքում կիրառվել են հետազոտության հետևյալ մեթոդները՝ Ռ. Պլուտչիկի «Կյանքի ոճերի ինդեքս»-ի մեթոդական գործիքակազմը, Դ.Ա.Լեոնտևի և Ե. Բ. Ռասսկազովայի կողմից կատարված Ս. Մադդիի «Կենսակայունության» հարցարանի ադապտացումը, Մ. Ռոկիչի «Արժեքային կողմնորոշումներ» հարցարանը, Ս. Արգումանյանի, Ս. Մկրտչյանի և Վ. Սարգսյանի «Անձնավորության արժեքների բացահայտման» և «Արժեքապահանջմունքային կողմնորոշումների ռեյտինգի ախտորոշման» մեթոդիկաները, Ռ. Լազարուսի –Ս. Ֆոլկմանի «Հաղթահարման վարքի միջոցներ» թեստը, Ի. Օ. Կոտենևի հետտրավմատիկ դրսևորումների բացահայտման հարցարանը, Ջ. Թեյլորի անձնային տագնապայնության դրսևորման գնահատման սանդղակը, Կ. Ռոջերսի և Ռ. Դայմոնդի «Սոցիալ-հոգեբանական հարմարման» ախտորոշման հարցարանը, Վ. Բոյկոյի անձնային ֆրոստրացիայի մակարդակիի ախտորոշման թեստը, համեմատական SPSS վերլուծությունը, «Արժեհամակարգի ռեյտինգային ախտորոշումը բաց հարցերի միջոցով» հեղինակային հարցարանը, սոցիոմետրիկ մեթոդի հեղինակային մոդիֆիկացիան և զրույցի մեթոդը:

Աշխատանքի գիտական նորույթը:

- Հոգեբանական գիտակարգում մեր կողմից սահմանվել է <<հոգեբանական պաշտպանության կումուլյատիվ մոդել>> եզրույթը, ներկայացվել վերջինիս էությունը, տարաբնույթ իրադրությունների հետ փոխկապակցված՝ շարժընթացի միտումները, դրսևորման առանձնահատկությունները սահմանամերձ գոտու ազգաբնակչության շրջանում:
- Բացահայտվել և ներկայացվել է հոգեբանական պաշտպանության դոմինանտող մեխանիզմների կումուլյացիայի արդյունքում դրական գործառույթային ազդեցությունը կենսակայունության ցուցանիշների վրա,
- Բացահայտվել է հոգեբանական պաշտպանության մեխանիզմների դրսևորման յուրատիպությունները սահմանամերձ գոտու ազգաբնակչության արժեհամակարգում մինչպատերազմական և հետպատերազմական շրջանում.
- Բնութագրվել է սահմանամերձ գոտու ազգաբնակչության հոգեբանական պաշտպանության մեխանիզմների կումուլյատիվ մոդելի <<գործառույթային երկարակեցություն>> եզրույթը,
- Վերհանվել և լուսաբանվել են սահմանամերձ գոտու ազգաբնակչության հոգեբանական պաշտպանության մեխանիզմների կոնստրուկտիվ տարրերը և դրանց դրսևորման տարիքային և արժեքային առանձնահատկությունները,
- Մշակվել է հոգեբանական պաշտպանության մեխանիզմների վերընթաց զարգացման մեթոդական ծրագիրը:

Տեսական նշանակությունը: Տեսական նշանակությունն այն է, որ ատենախոսության շրջանակում իրականացվել է սահմաններձ գոտու ազգաբնակչության հոգեբանական պաշտպանության մեխանիզմների վերլուծություն մինչպատերազմական և հետպատերազմական շրջանում: Վերլուծության են ենթարկվել կենսակայունության ցուցանիշների հետ պաշտպանության մեխանիզմների դրսևորման համահարաբերակցային կապը, արժեքային համակարգի բաղադրատարրերը: Առաջադրվել է հոգեբանական պաշտպանության դոմինանտող կոնստրուկտների ամրակայման գործընթացն ապահովող կումուլյատիվ մոդել: Բնութագրվել է սահմանամերձ գոտու ազգաբնակչության հոգեբանական պաշտպանության մեխանիզմների կումուլյատիվ մոդելի <<գործառույթային երկարակեցություն>> երևույթը:

Գիրառական նշանակությունը: Հետազոտության արդյունքները կիրառելի են գործնական հոգեբանության ոլորտում՝ նպաստելով սահմանամերձ գոտու ազգաբնակչության հոգեբանական դեստրուկտիվ պաշտպանության մեխանիզմների բացահայտմանն ու գործառույթային չեզոքացմանը, բացասական ներուժի մարմանը, կենսակայունության ցուցանիշների աճին, պաշտպանության մեխանիզմների դրական կոնստրուկտների կումուլյատիվ մոդելի շարժընթացին:

Հետազոտության արդյունքները կիրառելի են սոցիալական հոգեբանություն, արտակարգ իրավիճակների հոգեբանություն, անձի հոգեբանություն, էթնիկական հոգեբանություն, կիրառական սոցիալական հոգեբանություն դասընթացների իրականացման գործընթացում:

Պաշտպանության ներկայացվող դրույթներն են՝

1. Կենսակայունության ցուցանիշների երկարատև ամրակայմանը գուցընթաց հոգեբանական պաշտպանության մեխանիզմների դոմինանտող կոնստրուկտները ձեռք են բերում կոմույալացիայի հատկանիշներ:
2. Հոգեբանական պաշտպանության կոմույաստիվ մոդելը դրսևորվում է արժեհամակարգի վրա հոգեբանական պաշտպանության մեխանիզմների երկարատև ազդեցության արդյունքում:
3. Սահմանամերձ գոտում բնակվող արցախահայության հոգեբանական պաշտպանության մեխանիզմներն ազգաբնակչության կենսակայունության ընդհանուր պատկերի մաս են կազմում և առանձնանում են արժեհամակարգում ինքնավերահսկման և անկախության բաղադրիչների ամրակայմամբ:
4. Սահմանամերձ գոտու ազգաբնակչության շրջանում կենսակայունության առավել արտահայտիչ ցուցանիշը վերահսկումն է, որը դրսևորվում է իբրև հոգեբանական պաշտպանության մեխանիզմ:
5. Սահմանամերձ գոտու ազգաբնակչության շրջանում հոգեբանական պաշտպանության մեխանիզմների դոմինանտող կոնստրուկտներն են կոմպենսացիան և ռացիոնալիզացիան, որոնք շեշտադրված են մինչպատերազմական փուլում:
6. Սահմանամերձ գոտում հոգեբանական պաշտպանության մեխանիզմների դրական կոնստրուկտների որոշակի նահանջը պայմանավորված է հետպատերազմական իրավիճակով, ինչն ուղեկցվում է տագնապայնության մակարդակի էական աճով և կենսակայունության ցուցանիշների նվազմամբ:
7. Հոգեբանական պաշտպանության մեխանիզմների դրական կոնստրուկտների զարգացման ուղիներից է հոգեբանական պաշտպանության մեխանիզմների վերընթաց զարգացմանն ուղղված մեթոդական ծրագիրը:

Հետազոտության արդյունքների հուսալիությունն ու հավաստիությունը հիմնավորված են խնդրի հիմնադրույթներին առնչվող ուսումնասիրությունների վերլուծությամբ, որոնք կազմել են հետազոտության տեսամեթոդական հիմքը, աշխատանքի նպատակին և խնդիրներին համապատասխան մեթոդաբանության մշակմամբ, հավաստի փորձարարական մեթոդների համակարգի ընտրությամբ, ստացված արդյունքների բազմակողմանի վերլուծությամբ:

Աշխատանքի փորձարկումն ու հրապարակային քննարկումը:

Հետազոտության արդյունքները կիրառություն են գտել Ստեփանակերտի

Խ.Արքվյանի անվան հ.1 հիմնական դպրոցի մանկավարժական խորհրդի նիստում՝ «Սահմանամերձ գոտում բնակվող դեռահասների հոգեբանական կայունության բնութագրումը» թեմայով դասախոսությամբ (2019թ.), «Ֆիզիկական դաստիարակության և սպորտային պատրաստության հիմնախնդիրները» խորագրով միջազգային գիտամեթոդական գիտաժողովում, որի շրջանակներում հրատարակվել է «Ուսուցչի դերը դպրոցականների դեհանտ վարքի կարգավորման և կանխման գործում» հոդվածը (2019թ.), ԱրՊՀ-ում սպա հոգեբանների համար կազմակերպված սեմինար պարապմունքներին՝ «Սահմանամերձ գոտու բնութագրումը որպես սոցիալական կոնֆլիկտոզեն միջավայրի» թեմայով դասախոսությամբ (2018թ.), ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ «Հոգեբանական դիտարանում», որտեղ արծարծված նյութերը հրատարակվել են «Իննովացիոն հնարավորությունները և մարտահրավերները ժամանակակից աշխարհում» գիտաժողովի շրջանակներում (2018 թ.), Շուշիի ազատագրման և Արցախի Հանրապետության անկախության հռչակման 25-րդ տարեդարձին նվիրված միջազգային գիտաժողովներին (2017թ.), ԱրՊՀ հոգեբանական կենտրոնի կազմակերպած սեմինար պարապմունքներին և թրեյնինգներին, որոնք միտված են ժամանակակից հոգեբանական մեթոդների և հնարքների յուրացմանն ու պրակտիկ կիրառմանը (2017թ.), XII Միջազգային գիտապրակտիկ առցանց գիտաժողովում, որի շրջանակներում հրատարակվել են «Հոգեբանական պաշտպանության կումուլյատիվ մոդելը» զեկույցի թեզիսները (2021թ.):

Աշխատանքի կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, գրականության ցանկից և հավելվածից: Ատենախոսության ծավալը 197 մեքենագիր էջ է, առանց հավելվածի՝ 153 մեքենագիր էջ: Օգտագործվել է 11 աղյուսակ, 24 գծապատկեր, 161 աղբյուր՝ հայերեն և օտար լեզուներով:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացված է աշխատանքի նպատակը, սահմանված են հետազոտության վարկածը, օբյեկտը, առարկան, ձևակերպված են հետազոտության խնդիրները և տեսական գիտամեթոդաբանական հիմքերն ու կիրառված մեթոդները: Բացահայտված է աշխատանքի տեսական և գիտական նշանակությունը, գիտական նորույթը, նշված են պաշտպանությանը ներկայացվող դրոյթները:

Ատենախոսության **«Սահմանամերձ գոտու ազգաբնակչության հոգեբանական պաշտպանության առանձնահատկությունները և զարգացման հնարավորությունները (Արցախի օրինակով)»** խորագրով առաջին գլխում քննարկվել են սահմանամերձ գոտում անձի հոգեբանական պաշտպանության եզրույթի տեսամեթոդաբանական մեկնությունները: Առաջին գլուխը բաղկացած է երեք ենթագլուխներից՝

1.1 Հոգեբանական պաշտպանության եզրույթն հոգեբանական գիտակարգում

1.2. Սահմանամերձ գոտու ազգաբնակչության հոգեբանական պաշտպանության հիմնահանդրի բնութագրումը

1.3. Անձի ինքնիրացումը և հոգեբանական կայունությունը սահմանամերձ գոտում:

Առաջին ենթագլխում ներկայացվել է հոգեբանական պաշտպանության սոցիալ-հոգեբանական ուսումնասիրությունների վերաբերյալ ակնարկը, ինչի արդյունքում կարող ենք փաստել, որ «հոգեբանական պաշտպանություն» եզրույթը հաճախ ներկայացվում է հոգեբանական թրեյնինգների ենթատեքստում կամ մեկնաբանվում որպես հոգեբանական օգնության ցուցաբերման հնարավոր արդյունք: Այդ եզրույթի կիրառումը դառնում է պահանջված հատկապես այն շրջաններում, որտեղ ազգաբնակչությունը գտնվում է սոցիալ-քաղաքական լարված իրավիճակում, ապրում է կյանքին սպառնացող պայմաններում և ստիպված կրում է այդ սպառնալիքներից բխող հետևանքները: Այս իրողությունն արտահայտում է թե՛ հարցերի գիտական մեկնաբանման, թե՛ սեղմ ժամկետներում դրանց լուծման սոցիալական անհրաժեշտությունը:

Երկրորդ ենթագլխում քննվել է հոգեբանական պաշտպանության ռազմավարությունը՝ որպես այդ երևույթի գլխավոր բնութագրական: Առանձնացվել է կոնֆլիկտային իրավիճակով պայմանավորված, սահմանամերձ գոտում կարևորվող այնպիսի գործոնների շարքը, որը հոգեբանական լարվածություն է առաջացնում ազգաբնակչության մոտ, ուստի նախադրյալներ է ստեղծում հոգեբանական պաշտպանության մեխանիզմների առաջացման ու զարգացման համար:

Երրորդ ենթագլխում ուսումնասիրվել են անձի ինքնիրացման, ինքնակարգավորման և հոգեբանական կայունության դրսևորումները սահմանամերձ գոտում: Քննվել է ինքնաօտարման եզրույթը՝ որպես անձի զարգացմանն ու ինքնիրացմանը հակասող երևույթ: Հոգեբանական կայունությունը ներկայացվել է որպես անձնային որակ, որի առանձին կողմերն են հաստատունությունը և դիմադրողականությունը, և որում միավորվում են մի շարք համալիր ընդունակություններ, տարբեր մակարդակների նյարդահոգեբանական բարդ երևույթներ:

Ստենախոսության երկրորդ գլուխը կրում է **«Սահմանամերձ գոտու ազգաբնակչության պաշտպանության մեխանիզմների ձևավորման հոգեբանական առանձնահատկությունները»** վերտառությունը և հետևյալ ենթագլուխները՝

2.1. Սահմանամերձ գոտու բնութագրումը որպես սոցիալական կոնֆլիկտագեն միջավայրի

2.2. Արցախահայության ազգային ինքնագիտակցության սոցիալ-հոգեբանական նկարագիրը

2.3. Հոգեբանական պաշտպանության կումուլյատիվ մոդելի ձևակերպումը:

Առաջին ենթագլխում ներկայացվել է սահմանամերձ գոտում կոնֆլիկտի սոցիալական բնույթը: Քննվել են կոնֆլիկտի մասին հոգեբանական ընկալումները: Մատնանշվել է այն փաստը, որ մարդկանց երկարաժամկետ առկայությունը կյանքի համար վտանգ ներկայացնող պայմաններում, որոնք կապված են զինված բախումների հետ, կարող է խոչընդոտել հասարակության մեջ անձի ներգրավմանը և պահանջել հարմարման ուղղված միջոցառումներ:

Երկրորդ ենթագլխում արցախահայության ազգային ինքնագիտակցության հոգեբանական ֆենոմենը ուսումնասիրվել է հարակից հասարակագիտական և հումանիտար մի շարք գիտությունների շրջանակներում: Քննվել է պատմական հիշողության և ազգային հավաքական Ես-պատկերի ձևավորման, անձի ինքնառեալիզացիայի և սոցիալականացման բարդ գործընթացների ամբողջությունը, որտեղ իր դերն ունեն արցախահայության պատմությանը, լեզվին, մշակույթին ու հոգեկան կերտվածքին վերաբերող բացմաբնույթ ուսումնասիրությունները, ազգային նույնականությանը վկայող տվյալ հողի նկատմամբ հավաքական տիրոջ գիտակության բացահայտումը, ինչն արտահայտվում է պատմական հայրենիքի մաս կազմելու զգացումով: Վերը նշված սոցիալ-հոգեբանական գործոնների քննությունը թույլ է տալիս եզրակացնելու «առանց պատերազմի, առանց հաշտության» հասարակությունների, ի դեմս Արցախի, երկբևեռ զարգացման հնարավորությունների մասին, ինչը կարող է պայմանավորված լինել ոչ միայն արտաքին գործոններով, այլև ներքին՝ հոգեբանական մի շարք գործոնների առկայությամբ ու արդիականացմամբ, ինչպիսիք են «թշնամու» պատկերի արդիականացումը, ներքին կոնսոլիդացիայի սինդրոմի թերզարգացվածությունը, սոցիալ-տնտեսական իզոլացիայի պայմաններում աճող սոցիալական պահանջմունքների անբավարարվածությունը:

Երրորդ ենթագլխում ձևակերպվել է հոգեբանական պաշտպանության կումուլյատիվ մոդելը: Հոգեբանական պաշտպանության մեխանիզմները ներկայացվել են ազգաբնակչության կենսակայունության ցուցանիշների միջոցով և դիտարկվել արժեքային համակարգի կառուցվածքում: Այդ մոդելն արտահայտվում է բոլոր բաղադրիչների՝ մեկը մյուսի հետ պարբերական փոխազդեցության միջոցով, որոնց «գործառությանի երկարակեցությունը» կրում է կումուլյատիվ բնույթ, քանի որ այդ փոխազդեցության արդիականությունը ձեռք է բերվում սահմանամերձ միջավայրում հոգեբանական պաշտպանության ձևերի ժամանակագրական կուտակման շնորհիվ, ինչի արդյունքում պաշտպանության մեխանիզմները ոչ միայն վերածվում են ազգաբնակչության կենսակայունության ցուցանիշների, այլև՝ ամրապնդվում են արժեքային համակարգում:

Այս վերլուծություններով էլ պայմանավորված է մեր հետազոտության փորձարարական մասի իրականացումը, ինչն ատենախոսության մեջ արտահայտված է երրորդ գլխում և կրում է **«Հոգեբանական պաշտպանության զարգացմանն ուղղված փորձարարական հետազոտություններ»** վերտառությունը և հետևյալ ենթագլուխները՝

3.1. Փորձարարական հետազոտության ընտրանքը և կիրառված մեթոդները

3.2. Փորձարարական հետազոտության արդյունքների ամփոփում

3.3. Հոգեբանական պաշտպանության զարգացմանն ուղղված գիտամեթոդական առաջարկություններ և հանձնարարականներ:

Փորձարարական հետազոտությունն անցկացվել է 3 փուլով. առաջին երկու փուլերն իրականացվել են մինչև 2020 թ. օգոստոս ամիսը՝ պատերազմական ակտիվ գործողությունների բացակայության պայմաններում և իրագործվել են ըստ հետևյալ ժամանակային բաշխման. 1-ին փուլը՝ 2015-2017թթ., 2-րդ փուլը՝ 2018-2020 թթ., 3-րդ փուլն իրագործվել է 2020 թ. վերջից 2021 թ. մարտ ամիսներն ընկած հետպատերազմական ժամանակահատվածում:

Հետազոտության երրորդ փուլի ընթացքում փորձարարական հետազոտության արդյունքները հնարավոր չէր արձանագրել ըստ Արցախի Հանրապետության նախկին շրջանների, քանի որ հակամարտության ընթացում որոշ շրջաններ Արցախի Հանրապետության հսկողությունից դուրս մնացին, իսկ Հայաստանի Հանրապետության Սյունիքի, Տավուշի և Գեղարքունիքի մարզերի շատ բնակավայրեր անմիջապես սահմանակից դարձան հակամարտող հարևան երկրին: Ավելացնենք նաև, որ բնակչության սովոր գանգվածը վերաբնակեցվել է իրենց նախկին բնակավայրերից հեռու համայնքներում, շատերն էլ ապաստան են գտել Հայաստանի Հանրապետության տարբեր վայրերում:

Հաշվի առնելով հակամարտության արդյունքում տեղի ունեցած արմատական վարչա-տարածքային և վիճակագրական փոփոխությունները, հարցումներն արձանագրվել են Արցախի ներկայիս տարածքում, ուր բնակչության վերաբնակեցումը տեղի էր ունենում հետազոտությանը հընթացս (n=1520):

Հետազոտության մասնակիցների ընտրանքը բաժանվել է երեք տարիքային խմբերի՝

1-ին խումբ՝ 18-29 տարեկան (1-ին փուլ՝ Խումբ Ա, 2-րդ փուլ՝ Խումբ Դ, 3-րդ փուլ՝ Խումբ Է)

2-րդ խումբ՝ 30-59 տարեկան (1-ին փուլ՝ Խումբ Բ, 2-րդ փուլ՝ Խումբ Ե, 3-րդ փուլ՝ Խումբ Ը)

3-րդ խումբ՝ 60-ից բարձր (1-ին փուլ՝ Խումբ Գ, 2-րդ փուլ՝ Խումբ Զ, 3-րդ փուլ՝ Խումբ Թ):

Ստացված արդյունքները համեմատվել են ստուգիչ համանման տարիքային խմբերի պատասխանների հետ, որոնք հավաքագրվել են առաջին և երկրորդ փուլերի ընթացքում Հայաստանի Հանրապետության ոչ սահմանամերձ որոշ համայնքներում (Տավուշի մարզ՝ n=290, Սյունիքի մարզ՝ n=315, Գեղարքունիքի մարզ՝ n=437, Վայոց Ձորի մարզ՝ n=386) բնակվող անձանցից: Առաջին երկու փուլերի ընթացքում ստուգիչ խմբի հետ փորձարարական հետազոտությունը կազմակերպվել է ոչ սահմանամերձ գոտում, քանի որ 2015-2020 թթ. ընթացքում Հայաստանի Հանրապետության որոշ համայնքներ սահմանակից չեն եղել հարևան երկրին: Սահմանամերձ գոտու որոշակի

փոփոխություններ տեղի ունեցան 2020 թ. նոյեմբերի 10-ին հաստատված հրադադարից հետո: Ուստի, հետազոտության երրորդ փուլն իրականացնելիս հաշվի է առնվել այն փաստը, որ վերը նշված փոփոխությունների հետևանքով Հայաստանի Հանրապետությունում ևս ավելացել են սահմանամերձ համայնքներ, ուստի այս փուլում ստուգիչ խմբի հետ իրականացվող աշխատանքները բաժանվել են ըստ նոր հակամարտությունից հետո ձևավորված սահմանամերձ (Սյունիքի մարզ՝ n=309, Գեղարքունիքի մարզ՝ n=321) և ոչ սահմանամերձ (Երևան՝ n=360, Սյունիքի մարզ՝ n=212, Գեղարքունիքի մարզ՝ n=207, Վայոց Ձորի մարզ՝ n=232) գոտիների սկզբունքի: Ստուգիչ խմբի ներսում տարիքային բաժանումը կատարվել է համաչափ բաշխմամբ:

Փորձարարական հետազոտության համար առանձնացված մեթոդների արդյունքների մշակումը տեղի է ունեցել բացահայտելու համար 2015-2021 թթ. ընկած ժամանակահատվածում հոգեբանական պաշտպանության մեխանիզմների դոմինանտող կոնստրուկտների արտահայտվածությունն ըստ սահմանամերձ գոտու ազգաբնակչության տարիքային խմբերի: Ստացված արդյունքները համեմատվել են ազգաբնակչության կենսակայունության ցուցանիշների հետ, ցույց է տրվել հոգեբանական պաշտպանության մեխանիզմների և կենսակայունության ցուցանիշների արտահայտվածության կապը արժեհամակարգում:

Ստորև նկարագրվում են փորձարարական հետազոտության ընթացքում կիրառված մեթոդները:

Ռ. Պլուսչիկ – Հ. Քելլերմանի «Կյանքի ոճերի ինդեքս»-ի մեթոդական գործիքակազմի միջոցով ներկայացվել են պաշտպանության մեխանիզմների արտահայտվածության տոկոսային ցուցանիշները ըստ տարիքային և ժամանակագրական հատկանիշների.

Աղյուսակ 1. Պաշտպանության մեխանիզմների տոկոսային ցուցանիշները

	Փուլեր, %					
	1-ին փուլ. 18-29 տ.	1-ին փուլ. 30- 59 տ.	1-ին փուլ. 60 և բարձր	2-րդ փուլ. 18- 29 տ.	2-րդ փուլ. 30- 59 տ.	2-րդ փուլ. 60 և բարձր
	Խումբ Ա	Խումբ Բ	Խումբ Գ	Խումբ Դ	Խումբ Ե	Խումբ Զ
Պրոյեկցիա	43	7	19	35	3	17
Ժխտում	2	2	1	2	1	3
Արտամղում	30	3	7	23	13	18
Ռացիոնալիզացիա	2	38	25	4	49	34
Ռեակցիա	5	12	17	6	8	9
Ռեգրեսիա	8	4	8	19	2	4

Կոմպենսացիա	1	29	19	3	21	12
Տեղափոխում	9	5	4	8	3	3

	Փուլեր, %		
	3-րդ փուլ. 18-29 տ.	3-րդ փուլ. 30-59 տ.	3-րդ փուլ. 60 և բարձր
	Խումբ Է	Խումբ Ը	Խումբ Թ
Պրոյեկցիա	41	38	29
Ժխտում	5	3	4
Արտամղում	6	4	33
Ռացիոնալիզացիա	1	19	5
Ռեակցիա	17	4	2
Ռեգրեսիա	18	9	9
Կոմպենսացիա	11	17	8
Տեղափոխում	1	6	10


Դ.Ա.Լեոնտևի և Ե.Ի.Ռասսկազովայի կողմից կատարված Ս. Մադդիի «Կենսակայունություն» հարցարանի միջոցով ստացված արդյունքները նույնպես համադրվել են Ռ. Պլուտչիկ-Չ. Քելլերմանի «Կյանքի ոճերի ինդեքս» մեթոդիկայի հետ: Ուստի, ներկայացվել են հոգեբանական պաշտպանության մեխանիզմների կոռելացիոն կապերը կենսակայունության ցուցանիշների հետ, որոնք նույնպես բացահայտվել են 3 փուլով:

Մ.Ռոկիչի «Արժեքային կողմնորոշումներ» հարցարանի միջոցով ներկայացվել է տերմինալ և ինստրումենտալ արժեքների խմբերի ենթատեսակների սխեմատիկ պատկերը, որը համեմատվել է **Ս. Արզումանյանի, Ս. Մկրտչյանի և Վ. Սարգսյանի «Անձնավորության արժեքների բացահայտման»** և **«Արժեք-պահանջումնքային կողմնորոշումների ռեյտինգի ախտորոշման» մեթոդիկաների** և **«Արժեհամակարգի ռեյտինգային ախտորոշումը բաց հարցերի միջոցով» հեղինակային հարցարանի** միջոցով: **Սոցիոմետրիկ մեթոդի հեղինակային մոդիֆիկացիայի** օգնությամբ կատարվել է արժեքների բաշխման սոցիոմետրիկ եղանակը, երբ հարցվող անձինք ստացել են հանձնարարություն՝ թղթի վրա տեղադրելու նախապես ցանկով տրված արժեքների տարբերակները ըստ դրանց արժևորելու աստիճանի:


Վերը նկարագրված մեթոդիկաների արդյունքները համեմատվեցին նաև ստուգիչ խմբում, որը ներկայացվել է ՀՀ ոչ սահմանամերձ գոտում բնակվող

նմանատիպ ընտրանքի պատասխանների հետ, որոնց վերաբերյալ գրաֆիկական պատկերը բերվում է ստորև.


Գծապատկեր 1. Ստուգիչ խմբի 1-ին տարիքային խմբի հոգեբանական պաշտպանության մեխանիզմների ցուցանիշների միջինացված տվյալները



Գծապատկեր 2. Ստուգիչ խմբի 2-ին տարիքային խմբի հոգեբանական պաշտպանության մեխանիզմների ցուցանիշների միջինացված տվյալները



Գծապատկեր 3. Ստուգիչ խմբի 3-ին տարիքային խմբի հոգեբանական պաշտպանության մեխանիզմների ցուցանիշների միջինացված տվյալները



Պարզելու համար սահմանամերձ գոտու բնակչության շրջանում 2020 թ. հակամարտության ռազմականացման և պատերազմական գործողությունների

ակտիվացման արդյունքում առաջացած տրավմատիկ սթրեսի հոգեբանական հետևանքները, կիրառվել է Ի. Օ. Կոտեննի՝ պատերազմական իրավիճակի ազդեցությամբ պայմանավորված հետտրավմատիկ դրսևորումների բացահայտման հարցարանը: Ստացված արդյունքները ստուգվել և հաստատվել են անձնային տագնապայնության դրսևորման գնահատման Ջ. Թեյլորի սանդղակի միջոցով: Հավելենք, որ Հայաստանի Հանրապետության ոչ սահմանամերձ համայնքներում ձևավորված ստուգիչ խմբում անցկացված այս մեթոդիկաների արդյունքերը տարբերվել են սահմանամերձ գոտու բնակիչների պատասխաններից հիմնականում հետևյալ չափանիշների կարևորությամբ: Հետպատերազմական շրջանում գերզգոնության ցուցանիշը էապես թուլացել է, իսկ ագրեսիվության և տագնապայնության ցուցանիշներն, ընդհակառակն, գրանցել են կտրուկ աճ: Պատերազմը վերապրողի մոտ մեղքի զգացումն ու լավատեսության ցուցանիշները գրեթե մնացել են անփոփ՝ սահմանամերձ գոտում ստուգիչ խմբի պատասխանների համեմատ: Այսպիսի արդյունքները, մեր կարծիքով, ցույց են տալիս առավել վտանգավոր պատկեր. տիրապետող է դառնում տագնապայնության ընդհանուր բարձր ֆոնը, թուլանում է գերզգոնության շնորհիվ վտանգի ստանձնման մակարդակը, ինչն ուժեղացնում է լավատեսության համատարած անկումն ու ամենուրք տարածվող անորոշության զգացումը: Արդյունքում բնակչության մոտ չեն զարգանում հոգեբանական պաշտպանական հատկապես կոնստրուկտիվ մեխանիզմները, մարդիկ իրենց համարում են անպաշտպան և անզոր:

Հաջորդ մեթոդիկան, որը կիրառվեց բացահայտելու համար սահմանամերձ գոտու բնակչության շրջանում ձևավորվող պաշտպանության մեխանիզմները և արտակարգ իրավիճակի հաղթահարման գործոնները, կիրառվել է Ռ. Լազարուսի –Ս. Ֆոլկմանի <<Հաղթահարման վարքի միջոցներ>> թեստով, որը նույնպես հետազոտվել է վերը նշված ժամանակագրական փուլայնությամբ:

Ամփոփելով, կարող ենք եզրակացնել, որ ընտրված մեթոդների ընտրությունն ու կիրառումը պայմանավորված է ուսումնասիրության գիտական վարկածի ապացուցման նպատակով: Այդ հանգամանքով է պայմանավորված ընտրված մեթոդների մշակումն ու եզրակացությունների ձևակերպումը:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մինչհակամարտության ռազմականացման շրջանը սահմանամերձ գոտու ազգաբնակչության հոգեբանական պաշտպանության կոնստրուկտիվ դրսևորումներն ակնհայտ են դառնում տարիների ընթացքում կենսակայունության ցուցանիշների ամրակայման հետ միասին:

Սահմանամերձ գոտում բնակվող արցախահայության հոգեբանական պաշտպանության մեխանիզմներն ազգաբնակչության կենսակայունության ընդհանուր պատկերի մաս են կազմում և առանձնանում են արժեքային համակարգում համապատասխան տարրերի կուույատիվ դրսևորմամբ:

Հատկանշական է, որ կումպենսացիայի բարձր ցուցանիշները գրանցվել են ուսումնասիրվող փուլի հենց սկզբում՝ մատնանշելով այդ մեխանիզմի կոնստրուկտիվ դերակատարությունը սթրեսածին իրավիճակի հաղթահարման իմաստով: Բնութագրական է նաև այն, որ Արցախի սոցիալ-տնտեսական և քաղաքական իրավիճակի համեմատական կայունացման շրջափուլում կումպենսացիայի գործառույթային նշանակալիությունը համապատասխանաբար թուլանում է: Այս հետևությունը հիմք է հանդիսանում ինչպես երիտասարդների, այնպես էլ տարեցների մոտ արտակարգ իրավիճակային պայմաններում ադապտացիայի կոնստրուկտիվ մեխանիզմների արդիականացմանն ու արժևորմանն ուղղված մեթոդական և գործնական կարևոր հետևությունների և համապատասխան հոգեբանական աշխատանքների իրականացման համար:

2. Մինչհակամարտության ռազմականացման շրջանը հոգեբանական պաշտպանությանն մեխանիզմների գործարկումը անկախ կոնֆլիկտային իրավիճակային պայմանների պահպանումից ուղեկցվում է խաղաղ աշխատանքի մեջ ներգրավվածությամբ: Այդ միտումը առավել ակնհայտ է դառնում տարիների ընթացքում ժողովրդավարացման գործընթացների հետ մեկտեղ:

Ներգրավվածության ընկալումը համադրվում է կենսակայունության մեկ այլ՝ վտանգի ստանձման ցուցանիշի հետ այնպես, որ սահմանամերձ գոտու ազգաբնակչության շրջանում խաղաղ աշխատանքի մեջ ներգրավվածությունը միաժամանակ շարունակում է աճել վտանգի արդիականության հետ մեկտեղ:

3.Սահմանամերձ գոտու ազգաբնակչության արժեհամակարգի բաղադրիչներից առավել կայուն արտահայտված են ինքնավերահսկման և անկախության արժեքները, որոնց դրսևորումը նպաստում է կենսակայունության ցուցանիշների մաս կազմող հոգեբանական պաշտպանության մեխանիզմների ամրակայմանը:

Սույնով բացահայտվեց հետազոտվող շրջանում արժեհամակարգի բաղադրիչներից ինքնավերահսկման և անկախության արժեքների առավել վառ արտահայտված լինելու փաստը:

4.Հոգեբանական պաշտպանության մեխանիզմները դրսևորվում են վերահսկման լոկուսի տիրապետմամբ, ինչը բնորոշ է մինչ հակամարտության ռազմականացումը սահմանամերձ գոտու ազգաբնակչության կենսակայունության պատկերի համար:

Նման պատկերը ցույց է տալիս այն, որ կենսակայունության ցուցանիշներից առավել ցայտուն երևում է վերահսկման ցուցանիշը կոմպենսացիայի-ռացիոնալիզացիայի հոգեբանական պաշտպանության մեխանիզմների հետ դրական կոռելացիայի բարձր մակարդակի շնորհիվ, ինչը խոսում է փաստ է իրավիճակի վերահսկման, ինչպես նաև ինքնավերահսկման, գիտակցման առաջնահերթության և արդիականության վերաբերյալ:

5. Հոգեբանական պաշտպանության մեխանիզմների ռացիոնալիզացիայի և կոմպենսացիայի առավել կոնստրուկտիվ դերակատարությունը արտահայտվում է մինչհավամարտության ռազմականացման շրջանում սթրեսածին պայմանների հաղթահարման և պրոլեկցիայի ու արտամղման մեխանիզմների «գործառության չեզոքացման» իմաստով:

Այդ երևույթն արտահայտվում է վտանգը ստանձնելու, կենսափորձը արժևորելու և արդյունքում ինքնավերահսկման կարողությունները զարգացնելու եղանակով: Հոգեբանական պաշտպանության մեխանիզմների կառուցողական կոնստրուկտների փոխազդեցությունը կենսակայունության ցուցանիշների հետ արտահայտվում է դրական կոռելացիոն կապերի շնորհիվ:

30-59 տարեկան անձանց ընտրանքը 1-ին փուլից արդեն իսկ ցույց է տալիս ռացիոնալիզացիայի և կոմպենսացիայի բավական բարձր աստիճան, որը կումուլյացիայի միտվածություն է դրսևորում ժամանակագրական 2-րդ փուլում:

6. Հետպատերազմյան շրջանում հոգեբանական պաշտպանության մեխանիզմները նախորդ շրջանի համեմատ ավելի թույլ են արտահայտված, ինչն ուղեկցվում է տագնապայտության մակարդակի որոշակի աճով:

7. Հոգեբանական պաշտպանության զարգացման ուղիներից է հոգեբանական պաշտպանության մեխանիզմների դրական կոնստրուկտների արդիականացմանն ուղղված փուլային մոդելի մշակումն ու իրագործումը, որի համալիր կիրառումը թույլ է տալիս ձևակերպելու արդյունքները որպես հետպատերազմյան շրջանում բնակչության հոգեբանական պաշտպանության դրսևորումների փուլային կումուլյացիայի մոդել:

Հետազոտության արդյունքները հետաքրքիր տվյալներ են հաղորդում սահմանամերձ գոտու ազգաբնակչության արժեհամակարգի առանձնահատկությունների վերաբերյալ: Աչքի է ընկնում արժեքների համալիր ներկայությունը անկախության և ինքնավերահսկման բացահայտ տիրապետմամբ, իսկ կենսակայունության ցուցանիշներից առանձնանում է վերահսկումը: Ամենաբարձր ցուցանիշներին է հարում նաև ռացիոնալիզմի և հանդուրժողականության արժեքների սխեմատիկ պատկերումը: Այս տվյալները առանձնապես կարևորություն են ներկայացնում հոգեբանական պաշտպանության կոնստրուկտիվ մեխանիզմների և հասարակությունում ադապտացիայի վերաբերյալ կատարելու եզրակացություններ, որոնք հաստատում են հոգեբանական պաշտպանության մեխանիզմների կումուլյացիայի շնորհիվ արժեհամակարգում դրանց արտահայտման փաստը:

Այսպիսով՝ կարող ենք եզրակացնել, որ, համաձայն Արցախի տարածքում նախանշված սոցիալ-հոգեբանական իրավիճակի, ինչպես նաև հետպատերազմական շրջանում սահմանամերձ գոտում ի հայտ եկած հարմարման և կենսագործունեության, նոր պայմաններում անհրաժեշտություն է առաջանում ձևավորելու հոգեբանական պաշտպանության համապատասխան մեխանիզմների արդիականացման մոդել, որը նպաստելու է սոցիոմետոդիքորոշումների զարգացմանն ու հոգեկան առողջության ամրակայմանը:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված հետևյալ հրատարակումներում:

1. Ֆիրյան Ա., Անձի հոգեբանական կայունության հասկացությունը սոցիալ-հոգեբանական գիտակարգում, Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ 3, ք.Երևան 2017թ., էջ 93-102.
2. Ֆիրյան Ա., Սահմանամերձ գոտում բնակվող դեռահասների հոգեբանական կայունության բնութագրումը, Կաճառ գիտական տարեգիրք, ք. Երևան Զանգակ 2017թ., էջ 270-276.
3. Ֆիրյան Ա., Սահմանամերձ գոտու բնակչության հոգեկան վիճակների բնութագրումը, Ինտովացիոն հնարավորությունները և մարտահրավերները ժամանակակից աշխարհում ք.Երևան «Նաիրի» հրատարակություն 2018թ., էջ 380-386.
4. Ֆիրյան Ա., Սահմանամերձ գոտու բնութագրումը որպես սոցիալական կոնֆլիկտոգեն միջավայրի Կաճառ գիտական տարեգիրք, ք. Երևան «Նաիրի» հրատարակություն 2018թ., էջ 219-227.
5. Hakobyan N., Firyany A., Features of person's psychological protection mechanisms in border zone, Հանրային կառավարում ք.Երևան 1/2019թ., էջ 266-273.
6. Ֆիրյան Ա., Անձի ինքնիրացումը և հոգեբանական կայունությունը սահմանամերձ գոտում, Արցախի պետական համալսարանի գիտական տեղեկագիրք, Ստեփանակերտ, Պրակ 1 2019թ., էջ 220-230.
7. Ֆիրյան Ա., Արցախահայության ազգային ինքնագիտակցության սոցիալ-հոգեբանական նկարագիրը, Արցախի պետական համալսարանի գիտական տեղեկագիրք, Ստեփանակերտ, Պրակ 2 2019թ., էջ 355-361.
8. Ֆիրյան Ա., Արցախի բնակչության հոգեբանական պաշտպանության մեխանիզմների փորձաքննությունը, Կաճառ գիտական պարբերական, ք.Երևան «Նաիրի» հրատարակություն 1/2020թ., էջ 41-57.
9. Акопян Н., Фирян А., Кумулятивная модель психологической защиты, WayScience, Միջազգային գիտապրակտիկ առցանց պարբերական, Դնեպր, Ուկրաինա, 2021-հ.1, էջ 234-235.

ФИРЯН АРАИК РОБЕРТОВИЧ

ОСОБЕННОСТИ ПСИХОЛОГИЧЕСКОЙ ЗАЩИТЫ НАСЕЛЕНИЯ ПРИГРАНИЧНОЙ ЗОНЫ И ВОЗМОЖНОСТИ РАЗВИТИЯ (НА ПРИМЕРЕ АРЦАХА)

Диссертация на соискание ученой степени кандидата психологических наук по специальности 19.00.03. “Социальная психология”.

Защита состоится 29 сентября 2021 года в 12.00 ч. на заседании специализированного совета по психологии 064 ВАК по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете им. Х.Абовяна по адресу: Ереван, 0010, ул. Тигран Мец, 17.

РЕЗЮМЕ

Актуальность диссертационного исследования обусловлена тем, что среди населения приграничных территорий, где отмечается напряженность межэтнических отношений, становятся более заметными различные проявления негативных психологических переживаний. В конфликтных и стрессовых условиях становится необходимым применение положительных конструктов механизмов психологической защиты.

Цель исследования:

Проанализировать особенности проявления механизмов психологической защиты среди населения приграничных территорий, представить концепцию кумуляции механизмов психологической защиты, нацеленную на повышение показателей жизнеспособности населения приграничной зоны и их воздействие на систему ценностных установок.

Гипотеза исследования.

Предполагается, что доминирующие конструкции механизмов психологической защиты населения приграничной зоны (на примере Арцаха) в довоенном периоде проявляются по направлению восходящей кумуляции в системе ценностей, которые в послевоенном периоде отстают, наряду с чем наблюдается существенный рост уровня тревожности и снижение показателей жизнестойчивости.

Научная новизна исследования.

1. В психологической науке сформулировался термин «кумулятивная модель психологической защиты», представлена суть последней, тенденции изменений, связанных с различными ситуациями, особенности проявления среди населения приграничной территории.

2. Выявлено и представлено положительное функциональное влияние на показатели жизнеустойчивости в результате кумуляции доминирующих механизмов психологической защиты;
3. Выявлены особенности проявления механизмов психологической защиты в системе ценностей населения приграничной территории в до- и послевоенном периодах.
4. Описан термин «функциональное долголетие» кумулятивной модели механизмов психологической защиты населения приграничной территории.
5. Выявлены, охвачены конструктивные элементы механизмов психологической защиты населения приграничной территории, возрастные и ценностные особенности их проявления,
6. Разработана методическая программа по развитию механизмов психологической защиты.

Теоретическая и практическая значимость исследования.

Теоретическая значимость заключается в том, что в рамках исследования был проведен анализ механизмов психологической защиты населения приграничной территории в до- и после-военный периоды 2020 года. Проанализирована взаимосвязь защитных механизмов с компонентами системы ценностей, предложена кумулятивная модель, обеспечивающая усиление доминирующих структур психологической защиты. Описана «функциональная долговечность» кумулятивной модели механизмов психологической защиты населения приграничной территории. Результаты исследования применимы в области практической психологии, способствуя выявлению и функциональной нейтрализации механизмов психологической деструктивной защиты населения приграничной территории и повышению показателей жизнеспособности.

Достоверность результатов.

Достоверность результатов обусловлена методологической обоснованностью исследуемой проблемы, соответствием цели, гипотезы и задач, а также использованными методами. Теоретические положения и выводы работы получены на основе научного анализа и статистической обработки экспериментальных данных.

Апробация и внедрение результатов исследования.

Результаты исследования обсуждались в рамках различных международных научных конференций, на заседании педагогического совета школы №1 имени Х. Абовяна г. Степанакерт, в рамках тренинговых программ и семинаров.

Структура работы.

Диссертация состоит из введения, трех глав, выводов, списка литературы и приложений. Представлены 11 таблиц, 24 графика, а также 161 источник литературы. Объем работы составляет 197 страниц, без приложений – 153 страниц.

По теме диссертации опубликовано 9 статей.

FIRYAN ARAYIK

FEATURES OF PSYCHOLOGICAL DEFENSE OF THE POPULATION OF THE BORDER AREA AND POSSIBILITIES OF DEVELOPMENT (ON THE EXAMPLE OF ARTSAKH)

Dissertation for pursuing a degree of candidate of psychological sciences in speciality 19.00.03. "Social Psychology".

The defence of this thesis will take place at 12.00 on September 29th, 2021 at the session of Degree Awarding commission 064 specializing in Psychology of the Higher Attestation Committee of the Republic of Armenia at Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan.

Address: Tigran Mets street 17, Yerevan, Republic of Armenia.

SUMMARY

Actuality.

The relevance of the dissertation research is due to the fact that among the population of border areas, where the tension of interethnic relations is noted, various manifestations of negative psychological experiences become more noticeable. In conflict and stressful conditions, it becomes necessary to use positive constructs of psychological defense mechanisms.

Objective of the research.

To analyze the features of the manifestation of psychological defense mechanisms among the population of border areas, present the concept of cumulation of psychological defense mechanisms aimed at increasing the indicators of the viability of the population of the border zone and their impact on the system of value attitudes.

Hypothesis of the research.

It is assumed that the dominant structures of the mechanisms of psychological defense of the population of the border area (for example, Artsakh) in the pre-war period are manifested in the direction of an upward cumulation in the system of values, which recede in the post-war period, along with which there is a significant increase in the level of anxiety and a decrease in vitality indicators.

Scientific novelty of the research.

1. In psychological science, the term "cumulative model of psychological defense" has been formulated, the essence of the latter, the tendencies of changes associated with various situations, the peculiarities of manifestation among the population of the border area are presented.

2. Revealed and presented a positive functional impact on the indicators of vitality as a result of the cumulation of the dominant mechanisms of psychological defense;

3. The features of manifestation of mechanisms of psychological defense in the system of values of the population of the border area in the pre- and post-war periods have been revealed.

4. The term "functional durability" of the cumulative model of the mechanisms of psychological protection of the population of the border area is described.

5. The constructive elements of the mechanisms of psychological protection of the population of the border area, the age and value characteristics of their manifestation, have been identified and covered.

6. A methodological program for the development of psychological defense mechanisms has been developed.

Theoretical and practical significance of the research.

The theoretical significance lies in the fact that the study analyzed the mechanisms of psychological defense of the population of the border area in the pre- and post-war periods of 2020. The interrelation of defense mechanisms with the components of the value system is analyzed, a cumulative model is proposed that provides the strengthening of the dominant structures of psychological defense. The article describes the "functional durability" of the cumulative model of the mechanisms of psychological defense of the population of the border area. The research results are applicable in the field of practical psychology, contributing to the identification and functional neutralization of the mechanisms of psychological destructive protection of the population of the border area and the increase in vitality indicators.

Credibility of results.

The reliability of the results is due to the methodological validity of the problem under study, the correspondence of the goal, hypothesis and objectives, as well as the methods used. The theoretical provisions and conclusions of the work are obtained on the basis of scientific analysis and statistical processing of experimental data.


Approbation and adoption of the research results.

The results of the research were discussed within the framework of various international scientific conferences, at a meeting of the pedagogical council of the school №1 named after Kh. Abovyan in Stepanakert, within the framework of training programs and seminars.

Structure of the thesis.

The thesis consists of the introduction, three chapters, conclusions, the list of references and appendices. There are presented 11 tables, 24 charts and 161 sources of literature. The volume of work makes 197 pages, without appendices does 153 pages.

Nine articles have been published on the subject of the thesis.

A handwritten signature in black ink, appearing to be 'A. Khachatryan', written in a cursive style.